

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 23/02-001

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Հիմք ընդունելով «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կանոնադրության 8.1.4. ենթամասի 30-րդ կետը՝ «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողովը)

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների կանոնները՝ համաձայն հավելվածի.
2. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվելուց և լիցենզավորվելուց անմիջապես հետո.
3. Հանձնարարել «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ համապատասխան աշխատակցին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո հրապարակել այն «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ պաշտոնական ինտերնետային կայքում:

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ
Ժողովի նախագահ
Ահարոն Լևոնյան

Հավելված
«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ժողովի
10.02.2023թ.-ի թիվ 23/02-001 որոշման

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ

Ներդրումային ծառայությունների կանոններ

Գլուխ 1: Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները սահմանում են «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից ներդրումային ծառայությունների մատուցման, մասնավորապես՝ հաճախորդների կողմից պատվերների ներկայացման, «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից պատվերների ստացման, հաղորդման և գործարքների կնքման կարգը, ինչպես նաև հաճախորդների կողմից բողոքների ներկայացման և քննության ընթացակարգը:
2. Սույն կանոններով սահմանված որոշ դրույթներ ներկայացվում են առանձին՝ ըստ «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից ծառայությունների մատուցման եղանակների՝ էլնելով դրանց առանձնահատկություններից:
3. Սույն կանոնները հիմնված են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթների և «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կանոնադրությամբ և այլ կանոններով կամ կանոնակարգերով սահմանված դրույթներ վրա:

Գլուխ 2: Հիմնական հասկացություններ

1. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
 - 1) «**բրոքերային ծառայություն**»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ծառայություն, այն է՝ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը՝ առանց հաճախորդի միջոցներին (դրամական միջոցներին և արժեթղթերին) տիրապետելու.
 - 2) «**պատվերների ստացում և հաղորդում**»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ծառայություն, այն է՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը՝ առանց հաճախորդի միջոցներին (դրամական միջոցներին և արժեթղթերին) տիրապետելու.
 - 3) «**Ընկերություն**»՝ «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ.
 - 4) «**պատվեր**»՝ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով հաճախորդի կողմից ներկայացվող հանձնարարականը, ինչպես նաև

Ընկերության կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը.

- 5) «**հաճախորդ**»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից՝ Ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա.
- 6) «**պայմանագիր**»՝ հաճախորդի և Ընկերության կողմից համաձայնեցված փաստաթուղթ, որը սահմանում է Ընկերության կողմից ծառայությունների մատուցման կարգը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները.
- 7) «**բրոքերային հաշիվ**»՝ յուրաքանչյուր հաճախորդի համար նախատեսված անհատական հաշիվ (User ID), որտեղ պահվում է հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ պատվերների և կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները).
- 8) «**բողոք**»՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաճախորդի կողմից Ընկերությանը գրավոր ներկայացված բողոք-պահանջ, որը կապված է Ընկերության կողմից մատուցված ծառայությունների հետ և պարունակում է գույքային պահանջ.
- 9) «**պրոֆեսիոնալ հաճախորդ**»՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» 2008թ.-ի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման.
- 10) «**Superra հավելված**»՝ Ընկերության կողմից սպասարկվող բջջային հավելված, որի միջոցով Ընկերությունը կարող է մատուցել ներդրումային ծառայություններ.
- 11) «**ավանդական եղանակ**»՝ Ընկերության կողմից ծառայությունների մատուցումը՝ առանց Superra հավելվածի.
- 12) «**Superra հաճախորդ**»՝ հաճախորդ, որը Superra հավելվածի միջոցով գրանցվել և նույնականացվել է, և ում համար բացվել է բրոքերային հաշիվ.
- 13) «**ռեզիդենտ**»՝ ըստ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության.
- 14) «**ոչ ռեզիդենտ**»՝ ըստ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության.
- 15) «**կենտրոնական բանկ**»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

- 16) «**Կանոնակարգ 4/06**»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06.
- 17) «**Կանոնակարգ 4/07**»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07.
- 18) «**ԷԿԵՆԳ**»՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» բաց բաժնետիրական ընկերություն.
- 19) «**նեդրումային ընկերություն**»՝ ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության.
- 20) «**բանկ**»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկը:
2. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

Գլուխ 3: Մատուցվող ներդրումային ծառայությունները և ծառայությունների մատուցման եղանակները

1. Ընկերությունը մատուցում է բրոքերային ծառայություն, ինչպես նաև իրականացնում է հաճախորդի պատվերների ստացում և հաղորդում՝ արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով:
2. Ընկերության կողմից սույն գլխի առաջին կետով սահմանված ծառայությունները մատուցվում են Superra հավելվածի միջոցով, ինչպես նաև ավանդական եղանակով:

Գլուխ 4: Ներդրումային ծառայությունների պայմանագիրը

1. Հաճախորդին սույն կանոնների 3-րդ գլխի առաջին կետով սահմանված ծառայությունների մատուցման համար Ընկերության և հաճախորդի միջև կնքվում է ներդրումային ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր:
 - 1.1 **Superra հավելված.** պայմանագիրը կնքվում է հավելվածի միջոցով՝ սույն կանոններով սահմանված կարգով գրանցվելուց և

նույնականացվելուց հետո, իսկ կնքված պայմանագրի օրինակը հաճախորդին է ուղարկվում էլեկտրոնային փոստի միջոցով: Ընդ որում, Superra հավելվածի միջոցով ներդրումային ծառայությունների պայմանագիր կնքվում է միայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անձանց և ոչ ռեզիդենտ այն անձանց հետ, ովքեր գրանցված են ԷԿԵՆԳ համակարգում:

1.2 Ավանդական եղանակ. ներդրումային ծառայությունների պայմանագիրը կնքվում է գրավոր տարբերակով՝ հաճախորդին առերես նույնականացնելուց հետո, իսկ պայմանագրի օրինակը հաճախորդին է տրամադրվում առձեռն կամ ուղարկվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Ընդ որում, մինչև պայմանագրի կնքումը Ընկերությունը կարող է հաճախորդից պահանջել Ընկերության ժողովի կողմից հաստատված «Ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման ընթացակարգը» կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը:

2. Պայմանագրի ձևը սահմանվում է Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ: Ընդ որում, պայմանագիրն առնվազն ներառում է հետևյալը.

- 1) կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- 2) ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
- 3) հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
- 4) հաճախորդի հետ կապի իրականացման կարգը,
- 5) պայմանագրի պահանջների չպահպանման համար կողմերի պատասխանատվությունը,
- 6) կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
- 7) պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանն առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
- 8) պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
- 9) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ,
- 10) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվեց նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթներին և Ընկերության

- կանոնադրությանը և այլ կանոններով և կանոնակարգերով սահմանված դրույթներին չհակասող այլ դրույթներ:
3. Մինչև պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումն Ընկերությունը հաճախորդին է տրամադրում Ընկերության ժողովի կողմից հաստատված «Ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման ընթացակարգը» կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը:
 - 3.1 **Superra հավելված.** նշված տեղեկատվությունը Superra հաճախորդին է տրամադրվում հավելվածի կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
 - 3.2 **Ավանդական եղանակ.** նշված տեղեկատվությունը հաճախորդին է տրամադրվում էլեկտրոնային փոստով:
 4. Պայմանագիր կնքելիս բոլոր հաճախորդներն Ընկերության կողմից համարվում են *ոչ պրոֆեսիոնալ*, սակայն հաճախորդը հնարավորություն ունի ընտրելու «պրոֆեսիոնալ հաճախորդ» դասակարգվելու տարբերակը, որի համար պետք է լրացնի ներկայացված հարցաշարը: Հարցաշարի կառուցվածքը և հարցերի բովանդակությունը սահմանվում են Ընկերության գործադիր տնօրենի հրամանով:
 - 4.1 **Superra հավելված.** պրոֆեսիոնալ հաճախորդ համարվելու համար սահմանված հարցաշարը լրացվում է հավելվածի միջոցով:
 - 4.2 **Ավանդական եղանակ.** պրոֆեսիոնալ հաճախորդ համարվելու համար սահմանված հարցաշարը լրացվում է գրավոր եղանակով:
 5. Հաճախորդները հնարավորություն ունեն համարվել որակավորված ներդրող Ընկերությանը դիմում ներկայացնելու միջոցով, որն իրականացվում է Կանոնակարգ 4/06-ով սահմանված կարգով:

Գլուխ 5: Բրոքերային հաշիվ բացելու կարգը

1. Մինչև հաճախորդին ծառայությունների մատուցումը հաճախորդի համար Ընկերությունը բացում է բրոքերային հաշիվ:
 - 1.1 **Superra հավելված.** հավելվածը ներբեռնած և մուտք գործած անձը (այսուհետ՝ օգտագործողը) կարող է հավելվածից օգտվել երկու եղանակով. «Որպես Հյուր», որի միջոցով որոշ տեղեկատվություն հասանելի կլինի օգտագործողի համար, մասնավորապես՝ օգտագործողը կարող է ծանոթանալ առաջարկվող արժեթղթերին, ինչպես նաև արժեթղթերի հաշվիչի միջոցով կատարել եկամտաբերության հաշվարկ, և որպես «Superra հաճախորդ», որի

դեպքում հաճախորդի համար կբացվի բրոքերային հաշիվ, որը թույլ կտա օգտվել Ընկերության ծառայություններից:

1.1.1 Superra հաճախորդ համարվելու համար օգտագործողը պետք է անցնի գրանցման և նույնականացման ողջ գործընթացը: Այդ նպատակով.

- 1) օգտագործողը բացված էջում պետք է ձևավորի մուտքանուն և գաղտնաբառ,
- 2) այնուհետև օգտագործողը պետք է լրացնի անձնական տվյալները, մասնավորապես՝ հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը, որոնց ուղարկվում է հաղորդագրության կոդ: Հաղորդագրության կոդի հաստատումից հետո համակարգի կողմից կատարվում է հաճախորդի հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի նույնականացում,
- 3) հաջորդ քայլով օգտագործողը պետք է լրացնի «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտ (FATCA)» հարցաշարը, հաստատի օգտվողի կանոնները և պայմանները (User Agreements), ծանոթանա Ընկերության ներքին կանոններին և կանոնակարգերին (այդ թվում՝ Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ սահմանված ներդրումային ծառայությունների սակագներին) և համագործակցող բանկերի համապատասխան ներքին կանոններին և կանոնակարգերին, ինչպես նաև սույն կանոնների 4-րդ գլխի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությանը և հաստատի ծանոթանալու մասին փաստը,
- 4) այնուհետև օգտագործողը պետք է անցնի նույնականացում՝ նույնականացման քարտի կամ անձնագրի տվյալների հիման վրա՝ լուսանկարելու միջոցով, որի ընթացքում համակարգի կողմից ստուգվում է ներկայացված փաստաթղթի վավերականությունը, փաստաթղթի տիրոջ և ներկայացված լուսանկարում պատկերված անձի՝ նույն անձը լինելու փաստը, գրանցվող անձի ֆիզիկապես ներկա լինելու փաստը (ինքնանկարի (սելֆի) միջոցով), ինչպես նաև փաստաթղթում առկա տվյալների արժանահավատությունն ու ճշտությունը՝ ստուգելով տրամադրված տեղեկատվության և առկա տվյալների համապատասխանությունն ու ճշգրտությունը՝ համեմատելով ԷԿԵՆԳ-ում առկա տվյալների հետ,
- 5) նույնականացվելուց հետո Ընկերության և հաճախորդի միջև կնքվում է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր, և հաճախորդի համար բացվում է բրոքերային հաշիվ:

1.2 **Ավանդական եղանակ.** մինչև բրոքերային հաշվի բացումը հաճախորդը պետք է ծանոթանա Ընկերության և համագործակցող բանկերի և ներդրումային ընկերությունների համապատասխան ներքին կանոններին և կանոնակարգերին, ինչպես նաև սույն կանոնների 4-րդ գլխի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությանը և հաստատի ծանոթանալու մասին փաստը (Ընկերության գրասենյակում կամ էլեկտրոնային փոստի միջոցով): Հաճախորդի համար բրոքերային հաշիվ բացվում է 4-րդ գլխի առաջին կետի 1.2-րդ ենթակետով սահմանված կարգով կնքված պայմանագրի հիման վրա:

Գլուխ 6: Հաճախորդի կողմից պատվերի ներկայացման կարգը

1. Համագործակցող բանկերի և ներդրումային ընկերությունների կողմից վաճառվող արժեթղթերը գնելու կամ բանկերին և ներդրումային ընկերություններին իր արժեթղթերը վաճառելու համար հաճախորդը պետք է Ընկերությանը ներկայացնի պատվեր, որը կատարվում է Ընկերության կողմից համագործակցող բանկի կամ ներդրումային ընկերության միջոցով (բրոքերային ծառայություն):
2. Եթե արժեթղթերը ցուցակված են կարգավորվող շուկայում, ապա հաճախորդի ներկայացրած պատվերը Ընկերության կողմից հաղորդվում է համագործակցող բանկին կամ ներդրումային ընկերությանը (պատվերի ստացում և հաղորդում)՝ համագործակցող բանկի կամ ներդրումային ընկերության կողմից կարգավորվող շուկայում հաճախորդի համար գործարքի կնքման նպատակով:
3. Հաճախորդի կողմից պատվերը կարող է ներկայացվել գրավոր կամ ոչ գրավոր ձևով:

3.1 **Superra հավելված.** մինչև պատվեր ներկայացնելը Superra հաճախորդը ծանոթանում է համագործակցող բանկերին և դրանց կողմից առաջարկվող արժեթղթերին:

3.1.1 Superra հաճախորդի կողմից որևէ բանկ ընտրելիս կնքվում է եռակողմ պայմանագիր հաճախորդի, Ընկերության և համագործակցող բանկի միջև, որից հետո հաճախորդը հավելվածից ուղղորդվում է տվյալ բանկի համապատասխան էլեկտրոնային տիրույթ՝ հաճախորդի համար բանկի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով ընթացիկ հաշիվ և արժեթղթերի դեպո հաշիվ բացելու նպատակով:

3.1.2 Պատվեր ներկայացնելու և գործարք կնքելու նպատակով Superra հաճախորդն իր դրամական միջոցների հաշիվը կարող է լիցքավորել բանկային քարտի կամ բանկային փոխանցման միջոցով:

3.1.3 Superra հաճախորդի կողմից հավելվածում առկա արժեթղթերից որևէ մեկն ընտրելիս բացվում է պատվերը, որտեղ առկա տվյալները լրացնելուց և պատվերը հաստատելուց հետո պատվերը համարվում է տրված:

3.1.4 Պատվերների ձևն ու լրացման կարգը սահմանվում է Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ:

3.2 Ավանդական եղանակ. հաճախորդի կողմից գրավոր ձևով պատվերը կարող է ներկայացվել էլեկտրոնային փոստի միջոցով կամ թղթային ձևով: Ոչ գրավոր ձևով պատվերը կարող է ներկայացվել հեռախոսազանգի միջոցով: Ընդ որում, հեռախոսազանգի միջոցով պատվերի ներկայացման դեպքում Ընկերության կողմից ներդրված համակարգի կողմից ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը ոչ գրավոր ձևով ստացված տեղեկատվության հիման վրա լրացվում է պատվերի ներկայացման սահմանված ձևը՝ նշելով տեղեկատվության ստացման ժամանակը բոլորի ճշտությամբ:

4. Հաճախորդի կողմից պատվերի ներկայացման և դրա բովանդակությունը հավաստող փաստը (ներառյալ ներկայացման ժամանակը՝ հաջորդաբար լրացնելով տարին, ամիսը, օրը, ժամը և բոլորն) գրանցվում է Ընկերության համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ:

Գլուխ 7: Հաճախորդի կողմից ներկայացված պատվերի կատարման քաղաքականությունը և պատվերի հիման վրա գործարքի կնքումը

1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով: Ընդ որում, համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով պատվերը կատարելու համար, եթե Ընկերությունը կատարել է պատվերը կամ պատվերի առանձնահատուկ պայմանները՝ հետևելով հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներին:

1.1 **Superra հավելված.** Superra հաճախորդի կողմից արժեթղթերը գնելու կամ վաճառելու համար ներկայացված պատվերները կատարելը համարվում է Ընկերության կողմից լավագույն պայմաններով կատարված, քանի որ հավելվածում պատվեր ներկայացնելիս

հաճախորդն է ընտրում և հաստատում պատվերի առանձնահատուկ պայմանները:

1.2 Ավանդական եղանակ. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր քայլերը հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով կատարելու համար՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոններ՝ ըստ Կանոնակարգ 4/07-ով սահմանված կարգի:

2. Հաճախորդի կողմից պատվերը լրացնելուց և ներկայացնելուց հետո այն գրանցվում է Ընկերության կողմից, և ձևակերպվում է բրոքերային գործարքի հայտ կամ պատվերի հաղորդման հայտ:

2.1 Superra հավելված. մինչև բրոքերային գործարքի հայտի կամ պատվերի հաղորդման հայտի հիման վրա համագործակցող բանկին պատվեր ուղարկելը Ընկերության համակարգի կողմից ավտոմատ կերպով ստուգվում է պատվերում նշված գործարքի կատարման, ինչպես նաև ծառայության դիմաց վճարվող վճարի համար հաճախորդին պատկանող՝ բանկում առկա հաշիվներում դրամական միջոցների (գնման դեպքում) կամ արժեթղթերի (վաճառքի դեպքում) անհրաժեշտ քանակի կամ ծավալի առկայությունը՝ ըստ 6-րդ գլխի 3.1.1 ենթակետում նշված եռակողմ պայմանագրի:

2.1.1 Բավարար միջոցների բացակայության դեպքում պատվերի կատարումը մերժվում է:

2.1.2 Բավարար միջոցների առկայության դեպքում Ընկերության համակարգի կողմից ավտոմատ կերպով տվյալ բանկին պատվեր է ուղարկվում գործարքի կատարման համար, որից հետո հաճախորդին պատկանող՝ բանկում առկա հաշիվներում դրամական միջոցները (գնման դեպքում) կամ արժեթղթերը (վաճառքի դեպքում) ստեղծվում են:

2.1.3 Եթե գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը ցուցակված չեն կարգավորվող շուկայում, և գնվում և վաճառվում են տվյալ բանկի կողմից, ապա Ընկերության կողմից բրոքերային գործարքի հայտի ուղարկումից անմիջապես հետո բանկի հետ իրականացվում է գործարքի կնքում, որի հետևանքով իրականացվում է վերջնահաշվարկ՝ բանկի կողմից բացված ընթացիկ հաշվում և արժեթղթերի հաշվում համապատասխան ձևակերպումներ կատարելու միջոցով:

- 2.1.4 Եթե գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը ցուցակված են կարգավորվող շուկայում, պատվերի հաղորդման հայտի հիման վրա պատվերն ուղարկվում է համագործակցող բանկին կարգավորվող շուկայում գործարքի կատարման համար:
- 2.2 **Ավանդական եղանակ.** մինչև բրոքերային գործարքի հայտի կամ պատվերի հաղորդման հայտի հիման վրա բանկին կամ ներդրումային ընկերությանը պատվեր ուղարկելը Ընկերությունը ստուգում է պատվերում նշված գործարքի կատարման, ինչպես նաև ծառայության դիմաց վճարվող վճարի համար հաճախորդին պատկանող դրամական միջոցների (գնման դեպքում) կամ արժեթղթերը (վաճառքի դեպքում) անհրաժեշտ քանակի կամ ծավալի առկայությունը:
- 2.2.1 Բավարար միջոցների բացակայության դեպքում պատվերի կատարումը մերժվում է:
- 2.2.2 Բավարար միջոցների առկայության դեպքում Ընկերությունը հաճախորդի հաշվին կնքում է գործարք սույն կանոնների համաձայն:
- 2.2.3 Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերով գործարքներ կատարելու նպատակով Ընկերությունը պատվերը հաղորդում է համագործակցող բանկին կամ ներդրումային ընկերությանը, որն էլ հաճախորդի պատվերի հիման վրա կատարում է գործարք կարգավորվող շուկայում:

Գլուխ 8: Հաճախորդին պատվերի կատարման, հաղորդման և գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման կարգը

1. Եթե հաճախորդի կողմից ներկայացված պատվերի կատարումը (այդ թվում՝ ստացումը և հաղորդումը) մերժվում է, Ընկերության կողմից հաճախորդին տրամադրվում է պատվերի մերժման մասին հաշվետվություն պատվերը մերժելուց անմիջապես հետո:
- 1.1 **Superra հավելված.** պատվերը մերժվելու դեպքում Superra հաճախորդը հավելվածի միջոցով ծանուցվում է պատվերի մերժման և մերժման պատճառների մասին:
- 1.2 **Ավանդական եղանակ.** հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով տրվում է պատվերի մերժման մասին հաշվետվություն, որն առնվազն ներառում է Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը:

2. Եթե Ընկերությունը հաճախորդի պատվերը կատարում է (այդ թվում՝ ստացումը և հաղորդումը), ապա հաճախորդին տրամադրում է պատվերի կատարման մասին հաշվետվություն:

2.1 **Superra հավելված.** պատվերը կատարելու դեպքում Superra հաճախորդը հավելվածի միջոցով ծանուցվում է պատվերի կատարման մասին: Եթե պատվերը ստացվել և հաղորդվել է համագործակցող բանկին, ապա վերջինիս կողմից պատվերը կատարելուց (կարգավորվող շուկայում գործարքը կնքելուց) հետո հաճախորդը ծանուցվում է նաև գործարքի կնքման վերաբերյալ: Հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում են նաև գործարքի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ:

2.2 **Ավանդական եղանակ.** պատվերի կատարման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով տրվում է պատվերի կատարման մասին հաշվետվություն: Եթե պատվերը ստացվել և հաղորդվել է համագործակցող բանկին կամ ներդրումային ընկերությանը, ապա վերջինիս կողմից պատվերը կատարելու պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով տրվում է նաև հաղորդված պատվերի կատարման մասին հաշվետվություն: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված հաշվետվություններն առնվազն ներառում են Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը:

Գլուխ 9: Ներդրումային ծառայությունների մատուցման դիմաց վճարվող վճարը

1. Հաճախորդը մատուցվող ծառայությունների համար պարտավոր է Ընկերությանը վճարել Ընկերության գործադիր տնօրենի՝ «ՏԻԴՈ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների սակագները հաստատելու մասին» որոշմամբ սահմանված վճարներ:
2. Վճարները հաճախորդից գանձվում են Ընկերության կողմից գործարքի կնքման դեպքում: Եթե պատվերը ստացվել և հաղորդվել է համագործակցող բանկին, ապա վճարները հաճախորդից գանձվում են բանկի կողմից պատվերը կատարելու (կարգավորվող շուկայում գործարքը կնքելու) դեպքում:
3. Մինչև պատվեր ներկայացնելը հաճախորդը տեղեկացվում է գործարքի կնքման համար անհրաժեշտ վճարի չափի մասին:

Գլուխ 10: Բողոքների ներկայացման և քննության ընթացակարգը

1. Հաճախորդների կողմից բողոքները կարող են ներկայացվել միայն գրավոր տարբերակով:
 - 1.1 **Superra հավելված.** Superra հաճախորդը բողոքները կարող է ներկայացնել էլեկտրոնային փոստի միջոցով:
 - 1.2 **Ավանդական եղանակ.** հաճախորդը բողոքները կարող է ներկայացնել առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
2. Բողոքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով հաճախորդները կարող են Ընկերությանը դիմել հեռախոսազանգի և էլեկտրոնային փոստի միջոցով:
3. Ընկերության կողմից էլեկտրոնային փոստով բողոք ստանալու դեպքում (այդ թվում՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով ստանալու և պատասխանը էլեկտրոնային եղանակով ուղարկելու դեպքում) Ընկերությունը բողոքը ստանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը, հաճախորդի էլեկտրոնային փոստին ուղարկում է բողոքը ստանալու փաստը հավաստող գրություն (ստացական), որում նշվում է բողոքը նույնականացնող տեղեկատվություն, ինչպես նաև Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը՝ հնարավորության դեպքում:
4. Բողոքն առձեռն ստանալու դեպքում Ընկերությունը հաճախորդին տրամադրում է բողոքը ստանալու փաստը հավաստող փաստաթուղթ (ստացական), որում նշվում է Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը:
5. Ընկերության կողմից հաճախորդի ներկայացրած բողոքն ուսումնասիրվում է, և բողոքի վերջնական պատասխանը տրվում է բողոքի ներկայացման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, բողոքի վերջնական պատասխանն առնվազն ներառում Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը:

Գլուխ 11: Տեղեկատվության գրանցման կարգը

1. Ընկերությունը վարում է գրանցումներ իր բոլոր հաճախորդների, նրանց վերաբերյալ տեղեկատվության, նրանց հետ կնքված պայմանագրերի, մատուցվող ծառայությունների, հաճախորդների կողմից ներկայացված պատվերների (այդ թվում՝ մերժված), պատվերների հիման վրա կնքված գործարքների, ինչպես նաև ստացված և հաղորդված պատվերների վերաբերյալ:

2. Ծառայությունների և գործարքների մասով գրանցումները ներառում են համապատասխան տեղեկություններ՝ կապված արժեթղթերով կատարած բոլոր գործարքների հետ: Այդ տեղեկությունները ներառում են նաև հաճախորդների ինքնության մասին մանրամասն տեղեկատվություն:
3. Ծառայությունների և գործարքների մասով գրանցումները վարվում են այնպիսի եղանակով կամ միջոցներով, որպեսզի.
 - 1) Կենտրոնական բանկի պահանջով այդ գրանցումները հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլը,
 - 2) բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:
4. Եթե Ծառայությունների և գործարքների մասով գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք կատարվում են այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը:
5. Ընկերությունը վարում է գրանցումներ հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով: Այդ գրանցումները կատարվում են պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
6. Ընկերությունը հաճախորդի պատվերը կատարելուց (այդ թվում՝ պատվերի ստացումից և հաղորդումից) հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, կատարում է գրանցումներ կատարված գործարքի (ստացված և հաղորդված պատվերների) մասին:
7. Սույն գլխի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված գրանցումները ներառում են առնվազն Կանոնակարգ 4/07-ով սահմանված տեղեկատվությունը:

Գլուխ 12: Այլ դրույթներ

1. Սույն կանոններում փոփոխությունները կամ լրացումները հաստատվում են Ընկերության ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո: Ընդ որում, փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկ կարող է ներկայացնել Ընկերության գործադիր տնօրենը: